

9-87

Handwritten notes and signatures in the top left corner, including a signature that appears to be 'Գրքագիր' (Librarian).

ՊԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐՎԱՆԻ ՀԱՄԱՐՉՈՒՄԻ ԳՐԵԿՅԱՆ
ՄԱՆԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Է. 00.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման առեմալտություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2002

Ատենախոսության քեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Ն. Վ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր՝
Ա. Վ. Քոսյան

բանասիրական գիտությունների
թեկնածու՝ Վ. Ն. Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝


Ի. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի Ընդհանուր պատմության
ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 2002թ. հունիսի 25-ին ժամը 15-ին ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի
նիստում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2002թ. մայիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու՝

 Ս. Կ. Բաղդասարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԳԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հին Արևելքի պատմության շատ դրվագներ միահյուսվում են Հայկական
լեռնաշխարհի վաղ շրջանի պատմության հետ: Այս շարքում է նաև սեպագիր
աղբյուրների Ման(ն)ա երկիրը՝ Ուրվիո լճի ավազանում, նրանից հարավ և արևելք:
Հինարևելյան այս երկրի գուտ աշխարհագրական տեղադրությունը կարող էր
հանդիսանալ բավարար պայման՝ Մանայի պատմությունը Հայկական լեռնաշխարհի
ընդհանուր պատմության, ինչու չէ՞ նաև հայ ժողովրդի պատմության մաս դիտելու՝
լեռնաշխարհի հայկական և ոչ հայկական այլ պետական կազմավորումների անցած
պատմական ուղիներին զուգահեռ: Այս առումով հայրենական պատմագրության մեջ
խնդիրը շոշափվել է ոչ պատշաճ խայրությամբ, գերազանցապես՝ Ուրարտուին նվիրված
աշխատություններում:

Գրեթե նույնն է պատկերն արտերկրում: Մանայի պատմությունը շոշափվել է
ըստ անհրաժեշտության՝ հիմնականում Ասորեստանին, Ուրարտուին և կամ
Մարաստանին նվիրված աշխատանքներում որպես ենթատեքստ՝ հանգամանք, որն
ամենևին չի նպաստել նրա իրական պատմությունը վերհանելուն. հետազոտողները
պարզապես չեն անցել փաստական նյութի սահմանները:

Նախկինում արված, Մանայի պատմությունն արծարծող դասական
աշխատանքներն ունեն տասնյակ տարիների վաղեմություն: Ժամանակի հրամայականն
է անցած տասնամյակների ընթացքում սեպագրագիտության բնագավառում ձեռք
բերված նվաճումների, սեպագիր աղբյուրների տվյալների լույսի ներքո կատարելու
Մանայի պատմության քննական ուսումնասիրություն: Հեղինակը ստանձնել է այդ դերը՝
փորձելով ստանալ նոր մակարդակ՝ ժամանակի գիտության պահանջներին
համապատասխան:

Հայկական լեռնաշխարհի կամ, այլ մտեցմամբ, Իրանական բարձրավանդակի
հնագույն պետականություններից Մանայի բազավորության պատմության
ուսումնասիրությունը կարելի է դիտել ընդհանուր հիմնահարց, որի հետազոտությունը
վերտիչյալ շրջանակում խիստ այժմեական է՝ կարևորվելով թե հայրենական
արևելագիտության, թե օտարերկրյա պատմագրության մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԳԻՐՆԵՐԸ

Ներկա ատենախոսության նպատակն է գրավոր և հնագիտական, ինչպես նաև
օժանդակ աղբյուրների հիման վրա ներկայացնել Ման(ն)ա կոչվող երևույթի հնարավոր
ամբողջական պատկերը: Դրան հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ
խնդիրները.

- Պարզաբանել այն գործընթացներն ու օրինաչափությունները, որոնք
հանգեցրին յուրբեյների ցեղային ընդհանրության՝ Ջամուա միության
կազմավորմանը, վերհանել արտաքին գործոնների և ներքին զարգացումների,
տեղաբնիկի և եկվորի դերը ետզամուական պետական կազմավորումների, այդ
թվում նաև մանացիների երկրի կազմավորման գործում:
- Լուսաբանել ուրարտական և ասորեստանյան տեքստերների հետ Մանայի
բազավորության ռազմաքաղաքական փոխհարաբերությունների անհայտ
էջերը՝ սեպագիր աղբյուրների հանգամանալի վերլուծության հիման վրա՝
պատմա-հնագիտական ընդհանուր համատեքստում:
- Պարզել Մանայի բազավորության դերը մարական միասնական պետության
կազմավորման գործում: Հնարավորինս բացահայտել նրա

փոխհարաբերությունները Մարաստանի հետ քազավորության աստիճանական անկման և մարսական պետությանը ենթակա ժամանակաշրջաններում:

- Շարադյել Մանայի քազավորության ամբողջական ու քննական պատմությունը:
- Ամբողջացնել Մանայի և ենթակա երկրների տեղանունների ցանկը, անհրաժեշտ փաստարկներով հիմնավորել առաջարկված տեղադրումները:
- Հնարավորության սահմաններում վերհանել ժամանակաշրջանին և տարածաշրջանին բնորոշ, Մանայի տնտեսության բնդիմանուր պատկերը՝ դրա համար օգտագործելով առկա ողջ նյութը՝ գրավոր, հնագիտական և հարակից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՅՈՒՆ

Ատենախառնության թեմային վերաբերող կամ առնչվող ուսումնասիրությունները սկսվել են դեռևս սեպագրագիտության արշալույսին՝ XIX դարի վերջերից: Չնայած անցած ավելի քան հարյուր տարիներին, երբ հրատարակվեցին «Մանացիների քազավորությունը»¹, «Մանայական քազավորության պատմության մի քանի հարցեր»², «Մանայի քազավորության պատմությունից»³, ինչպես նաև մասնավոր և բնդիմանուր բնույթի տարբեր ուսումնասիրություններ, հետազոտողի սեղանին այդպես էլ չլրվեց Մանայի պատմությունն ամփոփող այնպիսի աշխատություն, որը դուրս գար փաստական նյութի նեղ սահմաններից: Հետևաբար, կարելի է փաստությամբ նշել, որ ոչ միայն հայրենական արևելագիտության, այլև օտար պատմագրության մեջ Մանայի քազավորության պատմությունն ու նրան առնչվող հարցերը որպես մեկ խնդիր համակողմանի ուսումնասիրության առարկա են դառնում առաջին անգամ: Ավաձին հարկ է ավելացնել, որ Մանային առնչվող դասական աշխատանքներից («Նախի-Ուրարտու», «Մարաստանի պատմությունը», «Բիսյանիլի») մեզ բաժանում է 30 – 50 տարի: Այս ընթացքում սեպագիր գիտությունն ապրել է հսկայական առաջընթաց, հայտնաբերվել են սեպագիր նոր աղբյուրներ, ճշգրտվել և վերահրատարակվել են հնկրը, վերանայվել են սկզբունքային մի շարք հարցեր, ի լրումն՝ նյութին քննական մոտեցման անհրաժեշտությունը, որոնք ամբողջության մեջ պարտադրում են վերաշարադրել Մանայի պատմությունը:

Ներկա ատենախառնությունը, ըստ այդմ, նպատակ ունի լրացնել բացը: Այս համատեքստում մեծաքանակ փաստեր շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Կիրառվում է մեծ քանակությամբ մասնագիտական նոր գրականություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախառնության մեջ առաջ քաշված դրույթները կարող են նպատակ Հայկական լեռնաշխարհի հնագույն պետականություններից ուրարտական տերության պատմության հարցերի, մանայական պետության և վաղ-իրանական պետական կազմավորումների հետ նրա ունեցած ռազմաքաղաքական, առևտրա-տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև մշակութային առնչությունների պարզաբանմանը:

Աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է նաև շրջանառության մեջ դրված նոր նյութերով և տվյալներով, մեկնաբանություններով ու հետևություններով, որոնք ամբողջության մեջ ներդրում կլինեն իրն Առաջավոր Ասիայի

¹ W. Belck, Das Reich die Mannäer, VBAG, 1884, S. 479-488. Թարգմանաբար՝ Լեյոն Բարայեան, Մաննիացոց տիրությունը, «Ազգագրական հանդես», 1895, էջ 27-36:

² Г.А. Меликишвили, Некоторые вопросы истории Маннейского царство, ВДИ, 1949, №. 1.

³ С.М. Кашкай, Из истории Маннейского царство, Баку, 1977.

համաժամանակյա պատմության ուսումնասիրության գործում: Ատենախառնության նյութերը կարող են օգտագործվել ինչպես Հայկական լեռնաշխարհի, այնպես էլ Իրանական բարձրավանդակի վաղ շրջանի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում կամ ձեռնարկներում:

ԱՇԽԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՌՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախառնության մեթոդաբանական հիմքն է կազմում պատմաճանաչողությունը՝ սկզբնաղբյուրների մատուցած տվյալների քննական վերլուծությամբ և նորովի մեկնաբանմամբ: Աշխատանքում խիստ կարևորվում է սկզբնաղբյուրների նկատմամբ համալիր մոտեցումը լինեն գրավոր կամ հնագիտական, հարկ եղած դեպքում՝ հարակից գիտությունների տվյալներ: Հավաստի է դիտվում այն եզրակացությունը, որի օգտին են վկայում մի քանի տիպի աղբյուրներ և դիտարկումներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՇՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվող ատենախառնության հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հայցորդի կողմից նրատարակված գիտական հոդվածներում և թեզերում՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից նրատարակվող «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Արևելք» ժողովածուներում, ինչպես նաև Երիտասարդ արևելագետների հանրապետական XXI և XXII գիտական նստաշրջաններում ընթերցված զեկուցումներում: Ատենախառնության էջերում քննարկված առանցքային հարցերից մեկը հավանության է արժանացել Թեհրանում կայանալիք Իրանագիտության ազգային առաջին համաժողովի գիտական խորհրդի կողմից:

Ատենախառնությունն ամբողջությամբ քննարկվել և երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի նիստում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախառնությունն ընդգրկում է մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի չորս հարյուրամյակ՝ 10-րդ դարի երկրորդ կեսից 6-րդ դարի կեսեր: Հիմնական ժամանակաշրջանը (մ.թ.ա. 850 - 580-ական թթ.) վերաբերում է Մանայի քազավորության պատմության սեպագիր շրջանին: Նրան նախորդող ժամանակահատվածի առկայությունը պայմանավորված է պատմական այն գաղափարներով, վերահանելու ցանկությամբ, որոնց այդպիսով կազմավորվեց մանացիների երկիրը:

Մանայի պատմության՝ սեպագիր աղբյուրների նախանշած ժամանակաշրջանին հաջորդող հատվածի առկայությունը նպատակ ունի պարզել քազավորության անկման մոտավոր թվականը: Դրան կարող է օժանդակել մ.թ.ա. 6-րդ դարում մարական, այնուհետև աքեմենյան տերության վարչաքաղաքական կառուցվածքին ու տեղ գտած փոփոխություններին վերաբերող անդրադարձը:

Ժամանակագրական նշված սահմանները, այսպիսով, հնարավորություն են ընձեռում երևույթը դիտել ամբողջության մեջ՝ ծագման, ձևավորման, կայացման, վերելքի, բարձրակետի, աստիճանական անկման և կործանման փուլերով, նպատակ են երևույթը ճիշտ ըմբռնելուն և մեկնաբանելուն:

ՍԿՋԲԱԳՐՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախտությունը գրվել է ասորեստանյան, բաբելոնյան և ուրարտական սեպագիր արձանագրությունների հիման վրա⁴: Սեպագիր արձանագրությունների շարքում առանձնանում են գերագանցապես ռազմաքաղաքական բովանդակություն ունեցող արքայական տարեգրություններն ու կրկնագրերը, արքունիք առաքված մահանգային իշխանությունների գեկուցագրերը, արքայական մամակներն ու ծիսական տեքստերը⁵: Գրավոր աղբյուրների շարքում են մաս երբայական (Աստվածաշունչ) և արամեական տեքստերը, ինչպես նաև անտիկ պատմագրության տվյալները:

Ատենախտության շարադրանքում նշանակալի տեղ է հատկացվել հնագիտությանը: Վերջինիս մատուցած նյութերը զգալի չափով համարում են սեպագիր աղբյուրների տվյալները, բացահայտում Մանայի նյութական մշակույթը, սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող հարցեր, մերձուրյան բնակչության նիստուկացի որոշ դրվագներ և այլն: Առկա նյութը ծագում է երբեմնի մանայական տարածքներում ընկած հնավայրերից՝ Հասանյո, Չիվիյե, Քափլանթո, Քալայջի, Բուկան, Չենջան-և Մոլեյման և:

Ատենախտության մեջ օգտագործվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն և բուրբերեն լեզուներով տարաբնույթ աշխատանքներ՝ սկզբնաղբյուրների հրատարակություններ, մենագրություններ, կոլեկտիվ ուսումնասիրություններ և գիտական հոդվածներ (շուրջ 400 ամուն):

Մանայի պատմության ուսումնասիրության գործում մեծ է և գնահատելի Գ.Ա. Սլիքիշվիլի⁶, Ի.Ս. Գյակոնովի⁷ և Ն.Վ. Հարությունյանի⁸ վաստակը: Մանային վերաբերող կամ որոշակիորեն առնչվող հարցերի են անդրադարձել Ռ. Գիրշմանը, Բ. Բրենտյեսը, Ա.Կ.Գ. Կրիստենսենը, Ի.Ն. Սելվեդսկայան, Մ. Սալվինին, Ա.Բ. Իվանչիկը և այլք (քաղաքական պատմություն)⁹, Մ. Շտրեքը, Ե. Հերցֆելդը, Լ.Գ. Լևինը, Ռ.Մ. Բոյսնը,

⁴ D.J. Wiseman, *Chronicles of Chaldaean Kings (626-556 B.C.) in the British Museum*, London, 1961; A.K. Grayson, *Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (to 1115 BC)*, The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods (RIMA), vol. I, Toronto, 1987; *ibid.* Assyrian Rulers of the Early First Millennium BC, I (1114-859 BC), RIMA, vol. II, Toronto, 1991; *ibid.* Assyrian Rulers of the Early First Millennium BC, (858-745 BC), RIMA, vol. III, Toronto, 1996; H. Tadmor, *The Inscriptions of Tiglath-Pileser III King of Assyria*, Critical Edition, with Introductions, Translations and Commentary, Jerusalem, 1994; A. Fuchs, *Die Inschriften Sargons II. aus Khorsabad*, Göttingen, 1994; H.B. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001.

⁵ S. Parpola, *The Correspondence of Sargon II, Part I, Letters from Assyria and the West*, SAA, I, Helsinki, 1987; I. Starr, *Queries to the Sungod*, SAA, IV, Helsinki, 1990; G. B. Lanfranchi, S. Parpola, *The Correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern Provinces*, SAA, V, Helsinki, 1990; F.M. Fales, J.N. Postgate, *Imperial Administrative Records, Part II: Provincial and Military Administration*, SAA, XI, Helsinki, 1995; A. Fuchs, S. Parpola, *Letters from Babylonia and the Eastern Provinces, The Correspondence of Sargon II, Part III*, SAA, XV, Helsinki, 2001.

⁶ Գ.Ա. Меликишвили, *Наири-Урарту, Древневосточные материалы по истории народов Закавказья*, Том 1, Тб., 1954.

⁷ И.М. Дьяконов, *История Мидии от древнейших времен до конца IV в.*, М.-Л., 1956; I.M. Diakonoff, *Media*, in I. Gershevitch (ed.), *The Cambridge History of Iran*, vol. 2: *The Median and Achaemenian Periods*, Cambridge, 1985.

⁸ H.B. Арутюнян, *Бианли (Урарту)*, Ер., 1970; он же: К локализации города Зибиа-Изибиа-Узбиа Маннейского царства, КБС, 1984, Том 7, он же: К некоторым урартским топонимам южнее Урмии, ДВ, 1983, № 4.

⁹ R.D. Ghirshman, *Persia from the Origins to Alexander the Great*, L., 1964; *ibid.* L'Iran des origines à l'Islam, P., 1976; B. Brentjes, *Die iranische Welt vor Mohammed*, Lpz; A.K.G. Kristensen, *Who were the Cimmerians and where did they come from?* (translated from the Danish by J. Laessoe), Copenhagen,

Ջ.Բ. Ռիդը, Մ. Լիվերանին (պատմական աշխարհագրություն)¹⁰, Ռ. Գիրշմանը, Է.Ա. Գրանտովսկին, Թ. Քայլեր-Յանգը (Էքնիկ խնդիրներ)¹¹, Գ.Ն. Կուրչկինը, Ս.Մ. Կաշկայը (հոգևոր մշակույթ)¹², Ե. Հերցֆելդը, Ռ. Գիրշմանը, Ա. Գորարը, Է. Պորադան, Վ.Գ. Լուկոնինը, Չ.Ա. Բրրնին, Լ. Վանդեն Բերգը, Ռ.Հ. Դայանը, Է.Օ. Նեգահբանը, Ֆ. Հոյը (հնագիտություն-նյութական մշակույթ)¹³ և բազում այլք:

Ատենախտությունում ըստ անհրաժեշտության օգտագործվել են նաև հարակից գիտությունների տվյալները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախտությունը բաղկացած է մախարանից, երեք գլուխներից՝ որոնցից յուրաքանչյուրն ունի համապատասխան ենթաբաժիններ, վերջաբանից, ծանոթագրություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածից. վերջինս ներառում է 12 քարտեզ, շուրջ 40 աղյուսակ:

1988; I.N. Medvedskaya, *The End of the Urartian Presence in the Region of Lake Urmia*, AIO, *Miscellanea in Honorem L. Vanden Berghe*, Gent, 1989; M. Salvini, *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt, 1995; А.И. Иванчик, *Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII – VII веках до н. э.*, М., 1996.

¹⁰ M. Streck, *Das Gebiet der heutigen Landschaften Armenien, Kurdistan und Westpersien nach den babylonisch-assyrischen Keilinschriften*, ZA, 1898, Band 13, Heft 1; ZA, 1899, Band 14, Heft 1-2; ZA 1901, Band 15, Heft 2-4; R.M. Boehmer, *Volkstum und Städte der Mannäer*, *Baghdader Mitteilungen*, 1964, Band 3; E. Herzfeld, *The Persian Empire. Studies in geography and ethnography of the Ancient Near East*, Wiesbaden, 1968; L.D. Levine, *Geographical Studies in the Neo-Assyrian Zagros, "Iran"*, 1973, vol. 11; *ibid.* "Iran", 1974, vol. 12, *ibid.* K.4675 + *The Zamua Itinerary*, SAAB, vol. 3, 1989; J.E. Reade, *Kassites and Assyrians in Iran, "Iran"*, 1976, vol. 16; *ibid.* Iran in the Neo-Assyrian Period, in M. Liverani (ed.), *Neo-Assyrian Geography*, Rome, 1995; H.B. Арутюнян, *Топонимика Урарту*, Ер., 1985; M. Liverani, *Studies on the Annals of Ashurnasirpal II*, 2. *Topographical Analysis*, *Quaderni di Geografica Storica*, 4, Rome, 1992; G.W. Vera Chamaza, *Der VIII Feldzug Sargons II. Eine Untersuchung zu Politik und historischer Geographie des späten 8. Jhs. v. Chr.*, AMI, Band 27, 1994, Band 28 (1995/96); *ibid.*

¹¹ R. Ghirshman, *Persia from the Origins to Alexander the Great*, L., 1964; *ibid.* L'Iran et la Migration des Indo-aryens et des Iraniens, Leiden, Brill, 1977; Э.А. Грантовский, *О распространении иранских племен на территории Ирана*, в сб. *История Иранского государства и культуры*, М., 1971; он же: *Ираноязычные племена Передней Азии в IX-VIII вв. до н. э.* (Автореферат дисс. на соискание ученой ст. Канд. Ист. Наук), М., 1964; он же: *Иранские племена из Приурмийского района IX-VIII вв. до н. э.*, в сб. *"Древний мир"*, 1962; он же: *Ранняя история иранских племен в Передней Азии*, М., 1970; T. Cuyler Young, *The Iranian Migration into the Zagros, "Iran"*, 1967, v. 5; *ibid.*

¹² E. Porada, *The Hasanlu Bowl, "Expedition"*, vol. I, No. 3, 1959; Г.Н. Курочкин, *К интерпретации некоторых изображений Раннего Железного века с территории северного Ирана*, СА, № 2, 1974; С.М. Кашкай, *Из истории Маннейского царства*, Баку, 1977; *ibid.*

¹³ E. Herzfeld, *Iran in the Ancient East*, L., 1941; R.D. Ghirshman, *7000 anses d'art en Iran*, Paris, 1961; *ibid.* 7000 Jahre Kunst in Iran, Essen, 1962; E. Porada, *Ancient Iran. The Art of Pre-Islamic Times*, London, 1965; *ibid.* *Art of the World. The Art of Ancient Iran: Pre-Islamic Cultures*, New York, 1965; E. Porada, R. Ettinghausen, *7000 Years of Iraian Art*, New York, 1964; A. Godard, *L'art de l'Iran*, Paris, 1962; L. Vanden Berghe, *Archaeologie de l'Iran Ancien*, Leiden, 1966; В.Г. Лукоцин, *Искусство древнего Ирана*, М., 1977; A. Godard, *Le trésor de Ziwiyé (Kurdistan)*, Haarlem (Publications du Service archéologique de l'Iran), 1950; O.W. Muscarella, *The Catalogue of Ivories from Hasanlu*, (University Museum Monograph, 40, Philadelphia, 1980); E.O. Negahban, *Marlik: The Complete Excavation Report* (University Museum Monograph, 87, Philadelphia, 1996 (Vol. 1: Text; Vol. 2: Illustrations); *ibid.*

ՆԱԽԱԲԱՆ

Նախաբանի մեջ հիմնավորվում է առեմախտության արդիականությունը, սահմանվում ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, հանգամանակի ներակայացվում արբյուրագիտական բազան և գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

«Մանայի թագավորության ռազմաքաղաքական պատմությունը (մ.թ.ա. 9-րդ դարի II կես – 6-րդ դար)»: Գլուխը կազմված է 12 բաժիններից:

Առաջին բաժինը գրվել է որպես պատմական ակնարկ, ուր արծարծվում է խնդրո առարկա տարածաշրջանի ընդհանուր պատկերը՝ միջինատրեստանյան դարաշրջանին հաջորդած «անցումային» ժամանակաշրջանում: Մ.թ.ա. XII – XIII դ. կամ «ձևավոր դարաշրջանի» տարիներին տեղ գտած վայրընթաց զարգացումները հիմնականում ընդգրկել են արևելամիջերկրածովյան ավազանի երկրները (Էգեյոս – Փոքր Ասիա – Ատրիք – Փյունիկիա – Պաղեստին և Եգիպտոս), Միջագետքն ու Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան շրջանները: Իրանական բարձրավանդակի՝ խնդրո առարկա տարածքները (հյուսիսագրության լեռնաշրջան) խուսափել են ճգնաժամից կամ դրա բացասական հետևանքներից: Կարելի է նշել միայն վերջինիս ոչ ուղղակի ազդեցության մասին, որը դրսևորվեց Չագրուսների անհանգստացող հիմնական ուժի՝ Ատրեստանի ռազմական հզորության և քաղաքական ակտիվության աննախադեպ նվազման մեջ: Բաժնում արձանագրվում է, որ տարածաշրջանում տեղ գտած և սեպագիր արբյուրներում մ.թ.ա. XI դ. վերջից փաստագրված գործընթացները, որոնք հանգեցրին պետական մի շարք կազմավորումների և, վերջին հաշվով, Մանայի թագավորության ծննդին, արդյունք էին բնականոն զարգացման և պատմական ուղի շարունակական, ոչ թռիչքային առաջընթացի, որում արտաքին գործոնների դերը հասնում էր նվազագույնի:

Երկրորդ բաժինը («Ազգագրական պատկերը հյուսիս-արևմտյան Իրանում մ.թ.ա. X – IX դդ.») անդրադառնում է տարածաշրջանի բնակչությանը, հիմնական էրնիկ խմբերի (յուրբեյներ, կուտիներ, խուրբիներ, իրանախոս ցեղեր, արսմեացիներ ևն) զբաղեցրած տարածքներին, մասամբ նաև՝ էրնիկ տեղաշարժերի պատմությանը:

Երրորդ բաժնում («Պետական կազմավորումները հյուսիս-արևմտյան Իրանում մ.թ.ա. X – IX դարերում և Ատրեստանը») լուսաբանվում է յուրբեյական ցեղապետությունների դաշինքը ներկայացնող Չամուա միության հետ ատրեստանցիների ունեցած ռազմական առաջին բախումների պատմությունը: Այն ներկայացնում է ատրեստանցյան արքաների (Թուկուրի-Նինուրուա II, Աշշուրնաժիբպալ II) իրագործած հետևողական քաղաքականություն, որը պայմանավորված էր ինչպես ռազմաքաղաքական շարժառիթներով (յուրբեյների բնակության սահմանի հեռացում Ատրեստանի միջնաշխարհից), այնպես էլ տնտեսական (առևտրական ճանապարհների վերահսկում, մուտք մետաղով հարուստ շրջաններ): Տեղ գտած անցքերի արդյունքում ատրեստանցիներին հաջողվեց հեռացնել սահմանը երկրի միջնաշխարհից, ինչպես նաև սպառնալի իրենց ռազմական ներկայությունը յուրբեյաբնակ տարածքներում՝ հիմքեր ստեղծելով դրանց հետագա յուրացման համար:

Չորրորդ բաժին («Մանայի թագավորության ծագումը: Ռազմաքաղաքական փոխհարաբերությունները Ատրեստանի, Ուրարտուի և Մանայի միջև մ.թ.ա. 9-րդ դարի II կեսին»): Բաժինը վերաբերում է մանայական պետության վաղ շրջանի պատմությանը: Ատրեստանցիների գործողությունները Աշշուրնաժիբպալ II-ի օրոք խթանեցին մի շարք գործընթացներ, որոնք քաղաքական ասպարեզում դրսևորվեցին «երկիր»-քաղաքների և

«երկիր»-պետությունների (ցեղապետությունների) անող համալսմանն ու սերտաճումների տեսքով: Գործընթացի հաջորդ աստիճանը կայուն պետականությունների և դրանց միությունների ծնունդն էր: Առաջավոր Ասիայի քաղաքական քայտեղը նշված զարգացումների արդյունքում կրեց էական փոփոխություններ: Պատմական ասպարեզ իջան ուրարտական պետությունը, մանացիների երկիրը, Կամասկուսի և Կարբեմիշի գլխավորած հյուսիս- և հարավ-փրիական միությունները են: Մ.թ.ա. 860-830-ական թթ., այս առումով, ներկայացնում են դրանց դեմ Ատրեստանի մղած պայքարի պատմություն, որն ընդգրկեց Աշշուրնաժիբպալ II-ի հաջորդ Սալմանասար III-ի գահակալության ողջ շրջանը:

Մույն բաժնում հանգամանակի շարադրվում է մ.թ.ա. 855, 843, 835, 829, 828թթ. մերձուրմյան ավագան ձեռնարկված ատրեստանյան արշավանքների, Մանա երկրի ծագման և ձևավորման փուլերի պատմությունը: Նշվում է, որ Չամուա կոչվող բնդիանությունից բաժանված մանայական պետականությունը գտնվել է բավական կենտրոնակ՝ փորձելով մաս գլխավորել իր շուրջը նույն միության (մերձուրմյան Նաիրի) ստեղծման գործընթացը: Հանգամանք, որը, ստեղծման կարծիքով, մեծապես պայմանավորել է ուրարտական տերության արտաքին նվաճումների ուղղության ընտրությունը՝ առաջին անգամ՝ դեպի մերձուրմյան տարածքներ՝ ակտյան երկրի դեմ:

Բաժնում հանգամանակի մեկնաբանվում է մերձուրմյան ավագանում ուրարտական տերության առաջխաղացման և հաստատման պատմությունն ու դրանով պայմանավորված պայքարը Մանայի թագավորության դեմ: Մեպագիր արբյուրների քննական ուսումնասիրությունը թույլ է տվել խոսելու մ.թ.ա. 828-792 թթ. ընթացքում, այն է՝ Իշպուհինի և Մեմուա արքաների իշխանության տարիներին մանացիների երկրի դեմ իրագործված ուրարտական հինգ արշավանքների մասին (նախկինում նշվող երկուսի փոխարեն): Հայցողի կողմից առաջարկվում է մերձուրմյան ավագանում ուրարտական տերության հաստատման որոշակի ժամանակագրություն, փորձ է արվում պարզաբանել ուրարտական արշավանքների բնույթն ու դրապատճառները, առաջարկվում են դրանց հավանական երթուղիներ: Ուրարտական տերությանը հաջողվել է ի վերջո հաղթանարել մանացիների դիմադրությունն ու առժամանակ գերիշխել այս երկրում: Ենթադրվում է, որ ուրարտացիները Մանայում կատարել են արքայափոխություն:

Բաժնի շրջանակներով սահմանափակվող ուսումնասիրության արդյունքում ուրվագծվում է Մանայի անցած պատմական ուղի կես հարյուրամյակ, նրա ունեցած քաղաքական դերն ու կշիռը, ինչը թույլ է տալիս էական փոխել մեր պատկերացումները Մանայի մասին:

Հինգերորդ բաժնում («Աստրա-ուրարտական հակամարտությունը հյուսիս-արևմտյան Իրանում և Մանայի թագավորությունը /մ.թ.ա. 8-րդ դարի 80-70-ական թթ./») ներկայացվում է Մանայի պատմությունը ուրարտական գերիշխանության փլույմ, նրա պայքարը անկախության համար՝ աստրա-ուրարտական հակամարտության համատեքստում: Փորձ է արվում դուրս գալ հիմնական նյութերը մատակարարող ուրարտական արձանագրությունների փաստական սահմաններից, մեկնաբանվում են հայտնի անցքերը տրամաբանական զարգացման և փոխկապակցվածության մեջ: Առկա փաստերի վերլուծության արդյունքում ուրվագծվում է մայրական գործողությունների ընթացքը, առաջարկվում արշավանքների հավանական երթուղիներ, բացահայտվում է Մանայի իրական դերը աստրա-ուրարտական հակամարտությունում:

Փաստվում է, որ Ուրարտուի դեմ մղած պայքարում չհասնելով հաջողության՝ ատրեստանցյան իշխողները ստիպված են եղել դիմելու Մանայի օգնությանը: Մինչ այդ տեղ գտած ռազմական գործողությունների տվյալներից հետևում է, որ Մանան մինչ մ.թ.ա. 780թ. գտնվել է ուրարտացիների վերահսկողության նկրք: Ըստ այդմ հեղինակը

ենթադրում է այս շրջանում Ասորեստանի և Մանայի միջև տեղ գտած շփումների մասին, որոնք ուղղված էին ռազմաքաղաքական համագործակցության հաստատմանը: Մանայական իշխողները օգտվել են ընձեռված առիթից՝ երկրի անկախությունը վերագտնելու հույսով, և Մանան ներգրավվել է հակաուրարտական ճամբար: Այս հանգամանքով է բացատրվում նրա դեմ «հանկարծակի» սկսված ուրարտական աննախադեպ արշավանքների իրողությունը:

Ըստ այդմ, բաժնի հիմնական մասը վերաբերում է ուրարտա-մանայական պատերազմին: Ուրարտական արձանագրությունների տվյալներից հետևում է, որ մերձուրմյան երկրների շարքում ռազմական գործողությունների հիմնական ծանրությունը կրել է Մանան: Մ.թ.ա. 779թ. սկսված մարտերը, հակառակ ուրարտական արձանագրությունների տեղեկություններին, ընթացել են ոչ հոգուտ Ուրարտուի: Ջարգացումները ստիպել են նրան հիմնական ուժերն ուղղել մերձուրմյան ավազան՝ Մանայի դեմ: Մ.թ.ա. 779թ. հաջորդած երեք տարիներին տեղ գտած ռազմական գործողությունները ընթացել են միմյանց այս տարածքներում: Ասորեստանի ռազմական աջակցությամբ Մանային հաջողվել է կասեցնել ուրարտական առաջխաղացումը և մարտական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածք: Դաշնակիցներին հաջողվել է նվաճել ռազմավարական խիստ կարևոր դիրքեր՝ «Ջագրոսների բանալին»՝ լեռնաղիները (մ.թ.ա. 776թ.): Այդ տարվա ռազմական գործողությունները առանձնահամար են նաև նրանով, որ նշում են մանայական և ասորեստանյան զորքերի պլանավորված և համատեղ իրագործած գործողություն: Դաշնակիցների նվաճած տարածքները ուրարտացիներին, ի վերջո, հաջողվել է ետ վերադարձնել՝ վերականգնելով դրությունը լեռներում:

Պատերազմական գործողություններում բեկում գրանցվել է միայն մ.թ.ա. 775թ.: Ուրարտական բանակի և մանայական զորքերի միջև տեղի ունեցած և վերջիններիս պարտությամբ ավարտված ճակատամարտից հետո մարտերը տեղափոխվել են Մանայի տարածք: Ուրարտացիներին հաջողվել է Մանայի բազավորությունը ծանր հարված հասցնել: Այս հաղթանակը ինչ-որ չափով պայմանավորված էր նաև Ասորեստանի պատվախոսությամբ. աստուրա-ուրարտական բախումներ աղբյուրները չեն արձանագրում: Մ.թ.ա. 774թ. իրադարձությունները մարտական գործողությունների նախընթաց փուլի տրամաբանական շարունակությունն էին: Ուրարտացիները զարգացրել են հաջողությունը՝ մանայական բուն տարածքներ ձեռնարկելով ևս մեկ արշավանք: Ուրարտական բանակը մանացիներին հասցրել է նոր պարտություն: Առավել ծանր հարվածը վերջիններիս համար երկրի ռազմական և քաղաքական կենտրոն Շիմերիխաղիթի(նի)ի կորուստն էր:

Վեցամյա պատերազմում հյուժված Մանայի բազավորությունը չկարողացավ շարունակել պայքարը և վերստին ընկավ Ուրարտուի գերիշխանության տակ:

Վեցերորդ բաժինը («Մանան ուրարտական գերիշխանության տարիներին») սկսվում է մ.թ.ա. 770-750-ական թթ. ուղղված պատմական ակնարկով: Յույց է տրվում, որ տարածաշրջանում քաղաքական դրության էական տեղաշարժ չի եղել: Առկա աղբյուրների տվյալները թույլ են տալիս նշելու մերձուրմյան տարածքներում և, հատկապես, Մանայում ուրարտացիների հաստատուն տիրապետության շարունակության մասին: Ուրարտական տերությունը գտնվում էր իր հզորության բարձրակետին և ի գործ էր ճնշել հակաուրարտական ցանկացած շարժում, լինել դա ներսից (մանացիների կույքներ) կամ դրսից (ասորեստանյան հնարավոր միջամտություն): Այս են վկայում վերոնշյալին վերաբերող ռազմաքաղաքական իրադարձությունները, որոնք մեկնաբանված են հնարավորինս հանգամանալի:

Հաջորդող ժամանակահատվածի պատմության լուսաբանման համար բացառիկ կարևորություն ունի Իրանական բարձրավանդակի տարածքում ասորեստանյան արքա Թիգլաթասար III-ի թողած կտոր-վիմագիրը, որը պարունակում է կարևոր տվյալներ աստուրա-մանայական փոխհարաբերությունների մասին: Որպես Մանայի պատմության կարևոր սկզբնաղբյուր արձանագրության տվյալները քննության են ենթարկվում առաջին անգամ:

Մեզագիր այս աղբյուրից հայտնի է ասորեստանյան Դուր-Թուկուրի-ապիլ-Լշարա քաղաքում տեղի ունեցած Թիգլաթասար III-ի և մանայական արքա Իրանգուի հանդիպման մասին: Փորձ է արվում մեկնել Իրանգուի նախաձեռնությամբ կայացած հանդիպումը: Երեքսրվում է, որ նա նպատակ ուներ ստանալ Ասորեստանի գործուն աջակցությունը՝ մանացիների հակաուրարտական ելույթի դեպքում: Երկու երկրների տիրակալները, ըստ էության, ձեռք են բերել որոշակի պայմանավորվածություններ, որոնց աղբյուրն առկա է. մանացիներն սպասամբել են ուրարտական գերիշխանության դեմ:

Դեպքերի զարգացումը հայտնի է ուրարտական արձանագրություններից: Ի պատասխան Մանա ձեռնարկված խոշոր արշավանքը կարևոր հաղթանակ է պարգևել ուրարտացիներին, ի լրումն Մանայի կրած տարածքային կորուստների, որոնք կցվել են տերությանը:

Բաժնում հիմնավորվում է տեսակետ, ըստ որի մ.թ.ա. 743թ. Արպադի մոտ Ուրարտուի կրած պարտությունը չի սասանել նրա դիրքերը Մանայում: Արպադի ճակատամարտից հետո էլ Ուրարտուն շարունակել է ակտիվորեն աջակցել հյուսիսային Միդիայի իշխանություններին՝ Ասորեստանի դեմ նրանց մղած պայքարում: Մա հազիվ թե տեղի ունենաք, եթե արևելքում կորսվեր Մանան: Նրա վերադարձմանը, թերև, ուղղված կլինեին երկրի ջանքերը:

Արձանագրվում է, որ մ.թ.ա. 744/3թ. իրադարձությունները հիմք են դրել ասուրա-մանայական երկարատև համագործակցությանը: Մանայական իշխողները դարձել են դեպի Ասորեստան՝ երկրի անկախության հնարավորությունը պայմանավորելով վերջինիս նկատմամբ վարվելիք քաղաքականությամբ: Շրջադարձն առավել հստակ է երևում մանայական իշխողների հետագա գործողություններից, որոնք լուսաբանվել են հնարավորինս հանգամանալի:

Մանայում ուրարտական գերիշխանությունն ավարտվել է մ.թ.ա. 735թ. տեղ գտած աստուրա-ուրարտական հեթթական բախման ժամանակ՝ Ուրարտուի և նրա ավանդական դաշնակիցների կրած պարտությունից հետո: Մանայական իշխողները պահը բաց չեն թողել՝ ենթակայության վերջին կապերը խզելու և բաղձալի անկախությունը հասնելու համար՝ թիկունքում ունենալով Ասորեստանի աջակցությունը: Առավել ևս, բացակայում էր ռազմական միջամտության հնարավորությունը. ուրարտական տերությունը ի վիճակի չէր դիմելու ակտիվ հակաքայլերի: Դրանք վերսկսվեցին հակառակորդ երկրների նոր տիրակալների՝ Ռուսա I-ի և Սարգոն II-ի օրոք, մինչ Մանայում շարունակում էր իշխել Իրանգուն:

Յոթերորդ բաժինը («Մանայի բազավորության վերելքի նախնական փուլը մ.թ.ա. 8-րդ դարի IV քառորդին և աստուրա-ուրարտական հակամարտությունը») տարրումնակ է և մանրամասն լուսաբանված՝ շնորհիվ ասորեստանյան հին ու նոր աղբյուրների մատուցած բավական առատ նյութի:

Մ.թ.ա. 735թ. հաջորդած առաջին տասնամյակը համարվում է Մանայի բազավորության բուն վերելքի ժամանակաշրջան՝ աննախադեպ տարածքային ձեռքբերումներով, ինչի մասին խոսվում է բաժնի սկզբնամասում: Մանացիների ծավալումը ասորեստանցիները գտել են նպատակահարմար. դրանով ուրարտական

տերութիւնը կտրվում էր արևմտյան Իրանից, ուր փորձում էին հաստատվել իրենք՝ ասորեստանցիները՝ հետագա ծախվածան ծրագրերով: Իսկ մանացիների հարևանությունը նրանց համար գերադասելի էր ուրարտականից: Ասորեստանի վարած քաղաքականությունը, մյուս կողմից, բխում էր նաև մանացիների շահերից, որոնց անհրաժեշտ էր ժամանակ և միջոցներ, այնքան, մինչև Ասորեստանի աջակցությամբ, օգտագործելով այս երկրի և Ուրարտուի հակաառաջդիմությունները, կծեքագատվեին ուրարտական շարունակական վտանգից: Այս վտանգն առկա էր լինելու այնքան ժամանակ, որքան ուրարտական տերության մերձուրմյան տիրույթները: Դրանից հետո, բերև, հեղափոխությունը կլիներ այլ դիրքերից խոսել նաև Ասորեստանի հետ:

Ատենախոսք մանրամասն կանգ է առնում մ.թ.ա. 719 – 715թթ. իրադարձությունների վրա: Առաջին անգամ արտահայտվում է տեսակետ մանայական արքաներ Իրանգուի և Ածայի համատեղ գահակալության հնարավորության վերաբերյալ՝ փաստը բացատրելով Իրանգուի պատկառելի տարիքով, ինչն անհրաժեշտություն էր առաջացրել ունենալու գործունակ գահակալ: Մանայի կենտրոնական իշխանության դեմ բարձրացված ենթակա երկրների ապստամբությունների հետ կապված իրադարձությունները մեկնաբանվում են նոր աղբյուրների լույսի ներքո: Ենթադրվում է, որ մանացիների արքա Ածայի սպանությունն իրականացվել է ուրարտացիների անմիջական մասնակցությամբ:

Հանգամանալի մեկնաբանվում են Ածայի սպանությանը հաջորդած ռազմաքաղաքական անցքերը, մանայական գահի նոր տիրոջ՝ Ուլլուսուուի վարած քաղաքականությունը: Ենթադրվում է, որ նա պատասխանատու է ուրարտական արքա Ռուսա I-ին դաշնակցած մի քանի երկրների առաջնորդների կործանման մեջ: Դրանով է բացատրվում մ.թ.ա. 716թ. տեղի ունեցած ասաուրա-մանայական կարճատև պատերազմից հետո ասորեստանյան արքայի մեղմ վերաբերմունքը Ուլլուսուուի և ընդհանրապես՝ մանացիների երկրի հանդեպ:

Զգալի մանրամասնություններ, որոնք հայտնի են ասորեստանյան վարչակազմի և արքունիքի նամակագրություններից, առաջին անգամ մեկնաբանվում են ըստ դեպքերի ենթադրվող հաջորդականության և զարգացումների:

Առաջարկվում է մ.թ.ա. 715-714թթ. մի կողմից Ասորեստանի և Մանայի, իսկ մյուս կողմից Ուրարտուի և ապստամբ մանայական շրջանների միջև ընթացած մարտական գործողությունների վերակազմություն: Սեպագիր նոր աղբյուրների հիման վրա բացահայտվում է, որ մանայական պետությունը Ուրարտուի դեմ սղած Ասորեստանի պայքարում ունեցել է ամենագործուն մասնակցություն: Այս շրջանակում հեղինակն անդրադառնում է Ուրարտուի համաժամանակյա պատմությանը՝ արժարժեքով մանայական դեպքերի հետ ժամանակագրորեն կապվող որոշ անցքեր (կիմմերների արշավանք, արքայազն Մելարտուայի և նրան աջակից զինվորականության խռովություն ևն): Հեղինակը գտնում է, որ ասորեստանյան արքա Մարգոն II-ի «VIII տարվա արշավանքը» չի իրականացվել վերը նշված անցքերին գուրադարձ կամ անմիջապես հետո: Դրանց միջև առկա է որոշակի ժամանակահատված, որի ընթացքում ուրարտական տերությունը կարողացել է ուշքի գալ ցնցումներից և ըստ հարկի նախապատրաստվել ասորեստանյան առաջիկա արշավանքին:

Յույց է տրվում, որ մանացիներին հաջողվել է համաձայնության գալ կիմմերական առաջնորդների հետ և ծառայության վերցնել նրանց հեծելազորին, առաջինը՝ հինարևելյան երկրներից:

Բաժնում քննարկված առանցքային հարցերից մեկը վերաբերում է մ.թ.ա. 714 թվականին Մարգոն II-ի ձեռնարկած արշավանքին, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «VIII տարվա արշավանք» անվամբ: Դրա շրջանակներում

ատենախոսն անդրադառնում է Մարգոնի և Ուլլուսուուի երկու հանդիպումներին: Դրանք նպատակ ունեին, ըստ երևույթին, քննարկել Ուրարտուի և ապստամբ երկրների դեմ ձեռնարկվելիք արշավանքի մանրամասները: Ենթադրվում է, որ մանայական պետությունը ստանձնել է ասորեստանյան բանակի պարենի մատակարարումը, ի լրումն ռազմական կողմի: Մարգոնին ուղեկցելու էին մանայական օժանդակ ուժեր՝ Ուլլուսուուի ավագ որդու առաջնորդությամբ:

Փորձ է արվում վերականգնել մարտական գործողությունների ընթացքը թեմայի նպատակների շրջանակում: Ենթադրվում է, որ մանայական զինավոր ուժերը, կենտրոնանալով Ուրարտուի մերձուրմյան սահմաններում և ստեղծելով ներխուժման սպառնալիք, կաշկանդելու էին ուրարտացիներին իրենց ամրացնելու՝ կանխելով ռազմական գործողություններին միջամտելու նրանց փորձերն ու ապահովելով հակառակորդի տարածներում խորացած ասորեստանյան բանակի քիչուցքը: Մանացիները նախատեսված ժամկետներում մարտական գործողություններ էին սկսելու հարավից: Ժամանակագրական գուրադարձ է անցկացվում ասորեստանյան հետախուզական նամակների և արշավանքի նկարագրությունը պահպանած «Աուվրի սոլյուսակի» տվյալների միջև: Բացահայտվում են մարտական գործողություններին մանացիների մասնակցության մանրամասները: Արտահայտվում է կարծիք, ըստ որի ուրարտական ռազմական խոշոր կենտրոններից Ուայախը նվաճվել է բացառապես մանայական զորքերի կողմից:

Ատենախոսն առաջարկում է Ռուսուի ճակատամարտի նոր վերակազմություն: Ենթադրվում է, որ հանդիպակց ճակատամարտ, որպես այդպիսին, չի եղել: Տեղի է ունեցել անսպասելի հարձակում, հակառակորդի ճամբարը տիրած բուռն խառնաշփոթ և դրան հետևած տրամաբանական շարունակություն՝ ուրարտական և դաշնակից ուժերի փախուստ ու կոտորած: Ռուսուի ժակատամարտը ընդհանուր գծերով հիշեցրել է հայկական և հռոմեական զորքերի միջև մ.թ.ա. 69թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած Տիգրանակերտի ճակատամարտը:

Պարզաբանվում են արշավանքի արդյունքները մի կողմից Ասորեստանի, մյուս կողմից Մանայի համար: «VIII տարվա արշավանքի» զլխավոր արդյունքը Ուրմիայից արևմուտք և հարավ ձգվող ուրարտական տիրույթների կամ, այլ կերպ ասած, ուրարտացիների մերձուրմյան հենարանի չեզոքացումն էր, ինչի արդյունքում Ուրարտուի սահմանները ետ են մղվել ընդհուպ մինչև Ուրմիայի հյուսիսային շրջաններ: Շուրջ 100 տարի ուրարտական տիրապետության տակ գտնված հարավ-մերձուրմյան տարածքներն անցել են Մանային՝ չհաշված այն շրջանները, որոնք մանացիները գրավել են սելիական ուժերով: Ինչ վերաբերում է հպատակ երկրներին, ապա դրանց նկատմամբ վերահաստատվել է Մանայի գերիշխանությունը:

Ամփոփելով մ.թ.ա. 714-713թթ. իրադարձությունները, եզրահանգվում է, որ Մարգոն «VIII տարվա արշավանքի» արդյունքում վտանգավոր հակառակորդից ձեռքագատվել է ոչ այնքան Ասորեստանը, որքան՝ Մանան:

Նկատի ունենանալով այն բոլոր գաղափարները, որոնք պայմանավորված էին «VIII տարվա արշավանքի» արդյունքներով, ատենախոսը եզրակացնում է՝ մ.թ.ա. 714թ. զագաթնակետին հասած ասուրա-ուրարտական հակամարտությունում հաղթեց Մանայի բազալությունը:

Ուրբերորդ բաժին («Մանայի բազալությունը հզորության շրջանում մ.թ.ա. 8-րդ դարի վերջ - 7-րդ դարի I կեսին /Ասուրա-մանայական փոխհարաբերությունները/»): Բաժնում քննարկվող ժամանակահատվածը Մանայի պատմության սակավ ուսումնասիրված էջերից է:

Մ.թ.ա VIII դարի վերջերին մերձուրմյան ավազանում Ուրարտուի դիրքերի կորուստն ու քաղաքական կշռի կորույթն անկումը, հյուսիս-արևմտյան Իրանում Մանայից գառ քաղաքական խոշոր միավորների բացակայությունը, Ասորեստանի բարձրագույն վերաբերմունքը և այլ հանգամանքներ մանացիներին բնձեռում էին քաղաքական ակտիվ դերակատարում ունենալու լայն հնարավորություններ: Մանայի բազավորությունը, կարելի է նկատել, առանձնել է Ուրարտուի դերը: Այս դերի շրջանակները չեն ենթարկում Ասորեստանի հովանավորության շարունակություն: Քաղաքական այլ ուժ, այլ դերակատար են նկարագրում Սինախերիբի և նրա հաջորդ Ասարհադդունի թողած սեպագիր տեքստերը:

Հեղինակի առաջին դիտարկումները վերաբերում են Մարզունի հաջորդ Սինախերիբի բազավորության առաջին տարիներից նկատվող և մ.թ.ա. մոտ 702թ. փաստագրված ասսորա-մանայական լարված հարաբերություններին: Կարծիք է հայտնվում, որ դա կարող էր լինել մանայական նոր արքայի իշխանության ժամանակահատվածում: Ըստ այդմ ենթադրվում է, որ Ուլլուսունուի բազավորությունն ավարտվել է գրեթե նույն ժամանակ, ինչ Մարզուն II-ինը, այն է՝ մ.թ.ա. 705թ. սահմաններում:

Բաժնի հիմնական հատվածը նվիրված է ասորեստանյան արքա Ասարխադդունի և մանայական արքաներ Բեկ-Խաբուի, առավելապես Ալաշերիի կառավարման տարիներին տեղ գտած ասսորա-մանայական պատերազմին: Փորձ է արվում փաստական նշանակալի տվյալներին հաղորդել ժամանակագրական հաջորդականություն, ըստ այդմ՝ ներկայացնելով տվյալ շրջանի Մանայի պատմության շարունակական պատկեր:

Յույց է տրվում ասսորա-մանայական պատերազմի ընթացքը՝ սկսած ասորեստանյան նահանգներ ձեռնարկված ավարտության ռազմարշավներից (մ.թ.ա. 676-675թթ.) մինչև մարտական լայնամասշտաբ գոյծորություններ՝ մանայական ծավալում հարձակում դեպի Ասորեստան (մ.թ.ա. 675-674թթ.): Դրա արդյունքում վերջինս կրել է տարածքային զգալի կորուստներ՝ գերազանցապես լեռնային Ջազրուսի շրջաններում և Պարսա նահանգում: Մանացիների նվաճած քաղաքների թվում հիշատակվում են Սիրիշը, Շարրու-իքքին, Դուր-Իլլիլը, Դուր-Թուկուսի-ասիլ-Էշարան, Խալծու շա Ադադ-ռեմաննին ևն: Ասորեստանյան բանակի երիցս ձեռնարկված փորձերը՝ բեկում մտցնելու պատերազմի մեջ, ավարտվել է անհաջողությամբ: Մանայական զորքերը ընդհուպ մոտեցել են Ասորեստանի խոշոր կենտրոն Արբալլին (Էրբիլ)՝ չփորձելով, սակայն, առաջանալ ավելին: Այս ուղղությամբ մանացիները ձեռք են բերել առավելագույնը:

Հատուկ ուշադրություն է դարձվել Մանայում սկյութների ներկայության և քաղաքական դերակատարման խնդրին: Ատենախտը տարբերակում է նրանց երկու խումբ՝ գտնելով, որ վաղ հիշատակումները վերաբերում են սկյութների՝ Մանայի տարածքում հաստատված զանգվածին: Ատենախտը ենթադրում է, որ նրանց հրավիրել են մանացիները, գուցե՝ որպես վարձկան զորքեր: Ինչ վերաբերում է երկրորդ խմբին, սակայն նրանք Պարսատուայի առաջնորդած սկյութներն են:

Բաժնում քննարկված առանցքային հարցերից է մանայական պետության և մարական բազում իշխանությունների փոխհարաբերությունների խնդիրը: Փորձ է արվում արժեվորել մանայական պետության ներդրումը միասնական Սարաստանի կազմավորման գործում: Ատենախտը ենթադրում է մանացիների գործուն մասնակցություն մարերի նշանավոր սպասարկության կազմակերպման գործում և այնուհետ: Ենթադրվում է, որ մարական առաջնորդներ Կաշտարիտին, Մամխուսարուն և Դուսաննին ակտիվ բանակցություններ են վարել մանացիների հետ, որոնցից լիակատար

աջակցության հավաստիացումներ ստանալուց հետո միայն բարձրացրել համընդհանուր սպասումները:

Բաժնում մանրամասն քննարկվում է սպասումության ընթացքը: Այն շուտով վերածվել է դաշնակից որոշ երկրների և ուժերի համատեղ մղած հաջող պայքարի: Մի քանի ամսվա ընթացքում Ասորեստանը կորցրել է վեց նահանգ, ստեղծվել է մարտական գործողությունները Միջագետք տեղափոխելու սպասուհիք, ինչը կարող էր իրականություն դառնալ դաշնակիցների ճամբար Էլամի ներգրավմամբ: Ասորեստանի մղած պատերազմի անհաջող ընթացքը ստիպել է Ասարխադդունին որոնելու ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքեր: Սկսվել է ինտենսիվ բանակցությունների շրջան, ինչի արդյունքում Պարսատուայի առաջնորդած սկյութները հեռացել են դաշնակիցներից: Այս պարագայում գիյունների են դիմել նաև մարերը՝ բավարարվելով սպասումության օջախ երեք նահանգներով: Ատենախտը փորձել է պարզաբանել մանացիների վերաբերմունքը դեպի իշխյալ զարգացումները: Մեպագիր աղբյուրները չեն պարունակում նրանց հետ տարվող բանակցությունների որևէ դրվագ: Երևում է, դաշնակիցների ճամբարը քայքայելուց և մարերի ու սկյութների հետ համաձայնության հասնելուց հետո ասորեստանցիները չեն զգացել դրա անհրաժեշտությունը: Մանացիներն էլ, մյուս կողմից, չէին կարող երկար ժամանակ շարունակել պատերազմը միայն սեփական ուժերով: Ուստի, ենթադրվում է, որ նրանք պետք է դժգոհ լինեին այս ամենից, այդ թվում նաև՝ իրենց երբեմնի դաշնակիցներից: Հայտնի չէ, բն այս դժգոհությունն ինչ ձևեր է ընդունել: Փաստ է միայն, որ Ասորեստանի դեմ Մանայի մղած պատերազմը, որին կարճ ժամանակ անց զուգորդվել է մարերի սպասումությունը, ավարտվել է մ.թ.ա. 672թ. սահմաններում: Մանացիներն իրենք են բանակցություններ սկսել Ասորեստանի հետ: Դրա մանրամասները հայտնի չեն, բնև առկա է արդյունքը՝ մանացիները ստիպված են եղել դուրս բերել զորքերը ասորեստանյան երեք նահանգներից՝ խաղաղության դիմաց:

Հետագա տասնամյակի ասորեստանյան աղբյուրներում Մանային վերաբերող տեղեկություններ չեն պահպանվել: Ենթադրվում է, որ ասսորա-մանայական հարաբերություններն ունեցել են խաղաղ բնույթ, իհարկե՝ ներքին լարվածության մեծ չափաբաժնով. Ասորեստանը չէր մոտացել մ.թ.ա. 676-674թթ. պատերազմը: Դրանով հանդերձ, Ասարխադդունի տերությունը ստիպված էր գրավել սպասողական դիրք:

Իններորդ բաժնի («Մանայի բազավորությունը հզորության շրջանում մ.թ.ա. 8-րդ դարի վերջ - 7-րդ դար /Ուրարտա-մանայական փոխհարաբերությունները/») սկզբում փորձ է արվում ուրվագծել ուրարտա-մանայական այն սահմանագիծը, որը կարող էր լինել մ.թ.ա. 714թ. «VIII տարվա արշավանքից» հետո: Ենթադրվում է, որ ուրարտացիները շարունակել են տիրել Ուրմիայից հյուսիս և մասամբ արևմուտք ընկած տարածքներին:

Ատենախտն ուրարտա-մանայական հարաբերությունների խաղաղ բնույթ է ենթադրում Արգիշտի II-ի իշխանության սմբողջ և Ռուսա II-ի կառավարման առաջին տարիների համար, որը ժամանակագրորեն համասպատասխանում է Ուլլուսունուի և նրա հաջորդ արքայի գահակալության շրջանին: Այն լարվածությունը, որը կարող էր լինել մ.թ.ա. 714-713թթ. հետո, հաստատապես չի հանգեցրել ռազմական բախումների: Արգիշտի II-ի կողմից մերձկասպյան տարածքներ ձեռնարկված հետախոր արշավանքի ընթացքում նկատվում է ձգտում՝ խուսափել մերձուրմյան շրջաններից: Ատենախտն արշավանքը դիտում է որպես ռազմական ցույց, որի արձագանքները պետք է հասանելի լինեին նաև մանացիներին, եթե ոչ հատկապես նրանց: Դա ստիպել է վերջիններին առժամանակ ձեռնպահ են մնալ ուրարտացիներին անհանգստացնելուց՝ հիմնական ուշադրությունն ուղղելով դեպի Ասորեստան: Մեպագիր աղբյուրներն այլևս չեն արձանագրելու ուրարտա-մանայական ընդհարումներ: Նման հնարավորություն չի ենթադրվում նաև Մանան հիշատակված ուրարտական վերջին արձանագրությունից:

Գրությունը փոխվել է Ռուսա II-ի կառավարման երկրորդ կեսին: Ուրարտական իշխանություններին ակնհայտորեն սկսել է անհանգստացնել տերության հարավ-արևելյան սահմանների անվտանգությունը՝ ստիպելով պետությանը ձեռնարկելու շտապ միջոցառումներ՝ դրանք անբացնելու ուղղությամբ: Այս կտրվածքում առեմախտան անդրադառնում է Ռուրարտի համաժամանակյա պատմությանը՝ փորձելով բացատրել Ռուսա II-ի օրոք ողջ տերությունն ընդգրկած քաղաքաշինական և ամրաշինական լայն աշխատանքները, ինչպես նաև Ռուրարտի անկման դարաշրջանի պատմությանն առնչվող դրոշ հարցեր: Առաջ է քաշվում Ռուրարտի տրոհման հնարավորությունը Ռուսա II-ի գահակալության վերջում կամ նրա հաջորդի կառավարման սկզբում: Այս շրջանակում ենթադրվում է Մանային սահմանակից տեղական ուրարտական իշխանության գոյություն՝ Բաստան (Rusai URU.TUR) կենտրոնով: Արտահայտվում է փոխհարաբերությունների հնարավոր պատկեր:

Տասներորդ բաժնում («Մ.թ.ա. 660 թ.-ի ասորեստանյան արշավանքը Մանա: Մանայի թագավորությունը մ.թ.ա. 7-րդ դարի II կեսին») քննարկված առանցքային հարցերից է մ.թ.ա. 660թ. մանացիների երկիր իրագործված ասորեստանյան արշավանքը: Պարզաբանվում է ինչպես մարտական գործողությունների ընթացքը, այնպես էլ մասնագիտական գրականության մեջ երբևէ չարձարձված՝ ասորեստանյան բանակի անցած երթուղին: Ինչ վերաբերում է արշավանքից հետո Մանայում տեղի ունեցած արքայափոխությանը, երբ դավադրության արդյունքում սպանված Ախշերիի փոխարեն գահ է բարձրացել նրա որդին՝ Ուալլին, ապա առեմախտը դրա պատասխանատու է դիտում մանայական տոհմային ավագանուն, որը գործել էր ասորեստանցիների հետ համաձայնեցված: Ենթադրվում է, որ Ուալլին չի եղել գահաժառանգը և դավադրությանը բերել է ամենաակտիվ մասնակցություն, ինչը հիմնավորվում է փաստերով:

Բաժնի երկրորդ մասը վերաբերում է Մանայի թագավորության հզորության անկման շրջանին: Ասորեստանի հետ Մանայի հարաբերությունները կրել են խաղաղ բնույթ: Մանայում շարունակել է իշխել Ուալլին, որին հաջորդել է, ամենայն հավանականությամբ, նրա որդի Էրիսինին: Մանացիների երկիրը, ասորեստանյան տերության վերջին տարիներին հանդես է եկել նրա կողքին՝ փորձելով օգնել իր երբեմնի թշնամու ու դաշնակցին:

Տասնմեկերորդ բաժինը («Մարա-մանայական փոխհարաբերությունները մ.թ.ա. 7-րդ դարի II կեսին») սկսվում է Ասորեստանի համաժամանակյա պատմությանն ուղղված ակնարկով: Հանգամանակի են լուսաբանված են մ.թ.ա. 616թ. իրադարձությունները, երբ վերջին անգամ հիշատակվում է Մանան: Աղբյուրից հետևում է, որ մանայական արքան (Էրիսինին կամ նրա հաջորդը) կատարել է իր դաշնակցային պարտավորությունները՝ Բաբելոնիայի դեմ պատերազմող Ասորեստանին օգնության ուղարկելով զորքեր: Փորձ է արվում պարզաբանել մասնագիտական գրականության մեջ վիճարկությունների տեղիք տված «մ.թ.ա. 613թ. խնդիրը»: Հեղինակն այդ տարի Ասորեստանի դեմ մղված մարտական գործողություններում Մարաստանի բացակայությունը պայմանավորում է ասորեստանցիների դաշնակից մանայական պետության դեմ նրա մղած պատերազմով:

Նշվում է, որ ասորեստանյան տերությանը ծանր հարվածներ հասցրած երկրի հետ պատերազմը երբևիցե հարցում կասկածներ չէր կարող թողնել: Թերևս այդ նույն՝ մ.թ.ա. 613թ. տեղ է գտել մանացիների վերջնական պարտությունը, ինչի արդյունքում երկիրը, որպես անկախ քաղաքական միավոր, դադարել է գոյություն ունենալուց:

Տասներկուերորդ բաժինը («Մարաստանի տիրապետությունը Մանայում: Մանայի թագավորության անկումը») վերաբերում է մանայական պետականության մայրամուտին: Բաժնի առանցքներից է առեմախտի եզրակացությունը, ըստ որի մ.թ.ա. 613թ. մանացիների կրած պարտությունից հետո մարերը պահպանել են մանայական

պետականությունը, անշուշտ՝ մարական գերիշխանության ներքո: Արված հետևությունը հենվում է նաև Մանան հիշատակող ասուրական լեզվաբանական տվյալների վրա: Մարերի մեղմ վերաբերմունքը Ասորեստանի դաշնակցի նկատմամբ առեմախտը պայմանավորում է այն փաստով, որ այս շրջանում դեռևս մնում էր աննվաճ Նինվե:

Առավել շրջանավոր կարծիքի համաձայն մարերը Լիվիայի դեմ պատերազմ սկսելուց առաջ վերացրել են իրենց տերության կազմում գտնվող ենթակա պետականությունները: Մինչդեռ թվում է, որ ենթակա երկրների համակարգը Մարաստանում գոյություն է ունեցել շատ ավելի երկար և թողել խորը հետք: Ենթակա երկրների գոյության մասին խոսում է անգամ Հեթոտտուն իր «Պատմությունում»: Ըստ այդմ, առաջարկվում է չբացատել մանայական պետականության գոյության հնարավորությունն ընդհուպ մինչև մ.թ.ա. VI դարի կեսերը: Մարաստանի «ժառանգորդ», Աքեմենյան տերության հիմնադիր Կյուրոս II Մեծի կատարած բարեփոխման արդյունքում ներմուծված սատրապական համակարգն արդեն չէր ենթադրում ենթակա պետականությունների գոյություն:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«Մանայի թագավորության վարչաքաղաքական կառուցվածքը, տեղանունները և դրանց տեղադրումները»: Գլուխը բաղկացած է երկու բաժնից:

Առաջին բաժնի առաջին ենթաբաժնում («Քաղաքական կառուցվածքը. կենտրոնական և մարզային իշխանություններ») քննության է ենթարկվում Մանայի պետական կարգը, արքայական իշխանության դերը, նրա համար մղված պայքարը, հարաբերությունները կենտրոնական և մարզային իշխանությունների հետ: Մանայում ենթադրվում է առնվազն տասներկու արքաների գահակալություն, որոնցից հայտնի են ութի անունները: Նրանցից վեցը (Ուրակի, Իրանգու, Աժա, Ուլլուսունու, Ախշերի, Ուալլի) իշխել են հաստատապես, իսկ երկուսի (Բեյ-Խաբու, Էրիսինին) գահակալությունը ենթադրվում է: Մի շարք նկատառումներ թույլ են տալիս խոսելու Մանայում իշխած մեկ արքայատոհմի մասին:

Սեպագիր աղբյուրների վկայությամբ, արքայական իշխանությունը ժառանգվել է՝ հորից անցնելով որդուն, ըստ տվագության: Այնուամենայնիվ, մանայական արքայատոհմին խոր չէին դավադրություններն ու իշխանության ժառանգման կարգի խախտումները: Ենթակա երկրների ապստամբության արդյունքում մ.թ.ա. 716թ. սպանված մանացիների արքա Աժայի որդին չի ժառանգել հոր գահը: Նրա փախարեն գահ է բարձրացել Աժայի եղբայրը՝ Ուլլուսունուն: Առկա են հիմքեր պնդելու, որ մանայական ավագանու՝ »երկրի մարդկանց« (niše māti) կազմակերպած խռովության ժամանակ, սպանված Ախշերիի փոխարեն գահ բարձրացած որդին՝ Ուալլին, չի եղել գահաժառանգը:

Մանացիների երկրում կառավարման տարբեր ինստիտուտների գոյությունն են հավաստում ասորեստանյան մի քանի աղբյուր, որոնցից հայտնի տերմիններն են ^{amēl}GAL-ը (^{amēl}rabān), ^{amēl}šibu-ն, ^{amēl}maliku-ն, ^{amēl}sakkanakku-ն (^{amēl}ša-kīn), ^{amēl}redū-ն, ^{amēl}rēšu-ն և ^{amēl}ša ziqnu-ն:

Ասորեստանյան գրագիրների նշած այս շարքը վերաբերում է կառավարման կոնկրետ ոլորտների: Հարցին հնարավոր է համարվել մոտենալ որոշակի վստահությամբ՝ ընդունելով, որ նշված տերմինները կիրառվել են ըստ նշանակության: Այնուամենայնիվ, առեմախտը չի տեսնում հիմքեր պնդելու, որ դրանք բովանդակությամբ նույնն են. մանացիների երկիրն ունեցել է պատմական ուրու թելադրած մի շարք առանձնահատկություններ, որոնք արտացոլվելու էին կառավարման ոլորտում ևս: Հայցորդը հարկ է համարում խուսափել ասորեստանյան կամ մի այլ երկրի իշխանության

մարմինների և նրանց իրականացրած գործառույթների մեկանիկական վերագրումներից՝ սահմանափակվելով սուկ տերմինների բովանդակության մասին հակիրճ ամփոփումով:

Մանայում իշխանության որոշ լծակներ, ըստ այդմ, գտնվել են արքայական ընտանիքի ներկայացուցիչների ձեռքին: Դրանք երեքն են.

^{amēl}GAL – բառացի նշանակում է *մեծ (անձ)*: Տերմինն ունի լայն ընդգրկում, հետևաբար ոճվար է ասել, թե կոնկրետ ինչ են նկատի ունեցել ասորեստանցիները: Սովորաբար թարգմանվում է *մեծամեծ(ներ), ազնվական(ություն)* իմաստներով:

^{amēl}šbu – թարգմանվում է *տվազ, ավազանու անդամ* նշանակությամբ:

^{amēl}māliku – իմաստը հստակ է՝ *խորհրդական*:

Ասորեստանյան աղբյուրը տարբերակում է նաև ծառայող խափի, որը ներկայացնող պաշտոններից հայտնի են երեքը:

^{amēl}šakkanakku – տերմինը նշանակել է կուսակալ, արքայի տեղապահ (բառացի՝ *նշանակված անձ* (օժտված իշխանությամբ): Մանայի թագավորության բուն տարածքներում՝ մարզերում, իշխանությունն իրագործում էր մարզային կառավարման ինստիտուտը, արքաների կողմից նշանակվող պաշտոնյաների՝ կուսակալների (աստուր. ^{amēl}šaknū, ^{amēl}GAR-nu) գլխավորությամբ: Այս պաշտոնները սովորաբար վստահվում էին ներքինիների:

^{amēl}redū – *առաջնորդ, հրամանատար*:

^{amēl}(ša) rēšu – տերմինը նշանակում է ներքինի: Նրանք զբաղեցրել են բավական բարձր պաշտոններ, որոնցից ^{amēl}rab (ša) rēši-ն (*գլխավոր ներքինի*) եղել է ասորեստանյան բանակի հրամանատարական կազմում: Մանացի ներքինում հիշատակող տեքստից դատելով, գոյծ ունենք իշխանությամբ օժտված անձի հետ. նա կոչված էր բանակցելու ասորեստանցիների հետ:

Ինչ վերաբերում է ներքինիշյալ տերմինին, ապա նրա պատկանելությունը նշված խմբերից որևէ մեկին մնում է անորոշ.

^{amēl}ša ziqnu – նշանակությունն է՝ *ավազ (բառացի՝ մորուսավոր)*:

Ենթադրվում է նաև զինվորական մի շարք աստիճանների գոյություն: Դրանցից են ^{amēl}rab hašsu-ն (*ամրության պետ, պարետ* նշանակությամբ), գուցե նաև՝ ^{amēl}redu-ն. վաղ միջազանցության դարաշրջանում այն նշանակել է *ռազմիկ*:

Բանակի գլխավոր հրամանատարը արքան էր, որն իրականացնում էր հրամանատարությունն անձանք կամ նրա հանձնարարությամբ՝ արքայական տան անդամներից մեկը, թերևս՝ գահաժառանգ որդին:

Երկրորդ ենթաբաժինը («*Վարչական կառուցվածքը. մարզեր և ենթակա երկրներ*») վերաբերում է Մանայի թագավորության վարչաքաղաքական կառուցվածքին: Մանայի թագավորությունը ներկայացրել է կենտրոնական իշխանության նկատմամբ ենթակայության տարբեր աստիճաններ ունեցող միավորների՝ «մարզերի» և «երկրների» ամբողջություն: Դրանցից առաջինները (աստուր. *nagū*) հանդիսացել են թագավորության բաղկացուցիչ մասեր և կառավարվել արքաների կողմից նշանակվող կուսակալների կողմից:

Երկրորդ խումբը կազմել են ենթակա ցեղերի «երկրները»՝ ցեղատարածքները: Ենթակա երկրի առաջնորդը իշխանության է եկել ժառանգության իրավունքով՝ ձևակերպելով այն ստանալով մանայական արքայի ձեռքից: Նման առաջնորդները պաշտոնապես համարվել են մանացիների երկրի «մեծ կուսակալներ» (^{amēl}šaknūn ^{mā}Mannāi rabūti):

Համակարգը միշտ չէ, որ արդարացրել է իրեն: Խոսքը վերաբերում է Մանային ենթակա երկրներին, որոնք սարգոնյան ժամանակաշրջանում վայելել են փաստացի անկախություն՝ ներգրավվելով հակամանայական տարբեր դաշինքների մեջ:

Ենթաբաժնում քննարկված առանցքային հարցերից մեկն էլ, ըստ այդմ, վերաբերում է Մանայում տեղ գտած վարչական փոփոխություններին, որոնք գիտության մեջ արձարծվում են առաջին անգամ: Յույց է տրվում, որ մ.թ.ա. 716-715թթ. սկսված գոյծընթացը հաջողությամբ ավարտվել է մ.թ.ա. 714թ. տեղ գտած ռազմական գործողություններից հետո: Վարչական բարեփոխման արդյունքում մարզային կառավարման հասակագրը ներմուծվել է ենթակա երկրներ, արդյունքում՝ ձևավորվել այն պատկերը, որը հայտնի է ասորեստանյան ուշ շրջանի արձանագրություններից՝ տասնյակ մարզերի բաժանված Մանայի թագավորություն:

Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են ընձեռում պնդելու մանայական պետությունում առնվազն տասնհինգ վարչամիավորների գոյության մասին (նախկին յոթի փոխարեն): Մանայի գերիշխանության տակ են գտնվել վեց «երկիր» (Անդիա, Ջիկիբտու, Ուիլդիշ, Մեսսի, Մուբի, Կոմուրդու), և ինը մարզ (Մուրիկաշ, Իզիբուտ, Բուշուու, Պարդիա, Արսիյանիշ, Էրիշթեյանա, Շարրու-իբբի, Ուայախս և պայմանականորեն «Արևելյան» անվանված մարզը):

Երկրորդ գլխի երկրորդ բաժնում («*Մանայի թագավորության տեղանունները և դրանց տեղադրումները*») քննարկվում են նորաստեղծության դարաշրջանի աղբյուրներից, ինչպես նաև ուրարտական արձանագրություններից հայտնի 77 երկրների (KUR = māṭ), քաղաքների (URU = āhu) և աշխարհագրական միավորների (ID, SADO) տեղադրությունները, նշելով սեպագիր աղբյուրներում դրանց բոլոր հիշատակումները, մոտեցումները պայմանավորող փաստաթղթերն ու ենթատեքստերը:

Նոր տեղադրումներ են առաջարկվել տասնյակ միավորների համար (Բուշուու, Շարրու-իբբի, Էրիշթեյանա, Արսիյանիշ, Բիբուտե, Գուր-Աշշուր, Անդիա, Կոմուրդա, Միբեշե են), լրացուցիչ փաստերով հաստատվել մասնագիտական գրականության մեջ սուկա մոտեցումները (Իզիբուտ, Ջիբիա, Ալլաբիա (resp. Պարդիա), Մեսսի, Մուրիկաշ են), հնարավորինս ամբողջացվել է տեղանունների ցանկը: Նրանում ներառված են միայն Մանայի և նրան ենթակա պետականությունների կազմում գտնվող տեղանունները, ինչպես նաև անուններ, որոնց մանայական պատկանելությունը ենթադրվում է:

ԵՐՐՈՐԳ ԳԼՈՒԽ

(«*Մանայի թագավորության տնտեսությունը*»): Բաղկացած է երեք բաժիններից, որոնցից առաջինն ունի չորս, երկրորդը՝ հինգ ենթաբաժին:

Առաջին բաժինը («*Գյուղատնտեսություն*») սկսվում է մերձուրմյան ավազանի բնակլիմայական պայմաններին վերաբերող անդրադարձով: Զննարկվում են տնտեսության հիմնական ճյուղը կազմող գյուղատնտեսության տարբեր ոլորտներ:

Մանայի երկրագործությանը վերաբերող սեպագիր աղբյուրների տվյալները աննշան են. սուկա են միայն ասորեստանյան աղբյուրներից «Լուվրի աղյուսակի» մի քանի վկայություն: Ենթադրվում է, որ մ.թ.ա. 714թ. արշավանքի ժամանակ մանայական պետությունը ստանձնել էր ասորեստանյան արքա Մարգոն II-ի բանակի պարենի մատակարարումը: Դրա շրջանակներում աղբյուրը նշում է մանայական Սիբուակա և Պանգիշ ամրոցներում կուտակված մթերքի պաշարների մասին, որոնց թվում՝ այլուր և զարի: Նույն աղբյուրի վկայությամբ, Մանային ենթակա պետականություններից Ուիլդիշում գտնվել են բազմաթիվ շտեմարաններ, որոնցում պահվող «*անհաշիվ քանակությամբ*» գալիս օգտագործվել է ասորեստանյան բանակի կարիքների համար:

Նման տեղեկություններ են առկա նաև մերձուրմյան ավազանի այլ շրջանների նկարագրություններում:

Այս տարածքներում տեղ գտած հնագիտական աշխատանքների արդյունքում գտնվել են հասցահատիկային մշակաբույսերի բազում մնացորդներ՝ երկշար և վեցշար զարու, կորեկի և ցորենի նմուշներ: Այդպիսիք հայտնի են տարբեր հնավայրերից:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղերից է այգեգործությունն ու խաղողագործությունը: Առաջին ոլորտին առնչվող ողջ սեպագիր նյութը սահմանափակվում է ասորեստանյան արձանագրություններից «Լուվրի արդյունակի» տվյալներով: Արբյուրը վկայում է այս տարածքներում այգիների (^{GIS}KIRI₆.MES), բերքատու ծառերի (GURUN.MEŠ) և խաղողատների (GEŠTIN.MEŠ) գոյության մասին:

Քիչ ավելի ընդարձակ տեղեկություններ են վերաբերում խաղողագործությանը: Հյուսիսային Չագրոսները Անդրկովկասի հետ միասին համարվում է խաղողի որթի հայրենիքը: Վայրի խաղողը (Vitis silvestris) այս տարածքներում հայտնի էր դեռևս մ.թ.ա. VI հազարամյակի սկզբներից, մշակովի խաղողը (Vitis vinifera)՝ մ.թ.ա. V-IV հազարամյակներից: Հնագիտական նյութը վկայում է զագրոսյան լեռնաշխարհում զինեղործության առկայության մասին՝ սկսած մ.թ.ա. IV հազարամյակի կեսերից: «Մերձուրմյան գինին» վայելել է մեծ հռչակ՝ բազմիցս նշվելով ասորեստանյան արբյուրներում որպես զագրոսյան երկրներից ստացվող կարևոր հարկատեսակ: Նման տեղեկություններ են հայտնի Աշշուրնաժիրայա II-ի և Սալմանասար III-ի արձանագրություններից: «Լուվրի արդյունակի» տվյալները երկակի նշում են մանացիների կողմից Միդրակկա և Պանգիշ ամրոցներում ասորեստանյան բանակի համար գինի պաշարելու մասին:

Մանայի քաղաքության տնտեսությանն առնչվող սեպագիր արբյուրների տեղեկությունները հիմնականում վերաբերում են անասնապահությանն ու ձիաբուծությանը: Հիշատակումներն ընդգրկում են ժամանակագրական լայն շրջան՝ Թուկուրի-Նինուրտա II-ից մինչև Աշշուրբանասայա (մ.թ.ա. IX դարի սկիզբ – VI դարի կես), իսկ նյարտական արբյուրներում՝ Արգիշտի I-ից Սարդուրի II (մ.թ.ա. VIII դարի 80 – 40-ական թթ.): Հիշատակումների մեծ քանակը վկայում է Մանայի, ինչպես նաև մերձուրմյան այլ երկրների տնտեսության մեջ հիշյալ ոլորտների զբաղեցրած կարևոր դիրքի և նշանակության մասին:

Ասորեստանյան տեքստերի համաձայն, մանայական պետությունը որպես հարկ առաքել է խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև ձիեր: Մերձուրմյան ավազանից ստացվող ձիերի երանակներն ունեցել են կարևոր նշանակություն Ասորեստանի և տնտեսության, և բանակի համար: Ենթադրվել է անգամ, որ Սարգոն II-ի «VIII տարվա արշավանքի» հիմքում ընկած են եղել տնտեսական շարժառիթներ. փաստը բացատրվում է ասորեստանյան բանակի համար մեծ քանակությամբ ձիեր ձեռք բերելու անհրաժեշտությամբ: Արբյուրների վկայությամբ մանացիներն իրենց հավասարը չեն ունեցել ձիեր վարժեցնելու գործում: Սեպագիր տեքստերից հայտնի են ուրարտացի կամ մանացի մասնագետներ՝ բառացի՝ *դաստիարակներ* (murabbānu), որոնք վարժեցրել են ձիեր: Ենթադրվում է, որ ասորեստանցիները վարժել են ծագումով ուրարտացի և մանացի հեծելազորային սպաների՝ օգտագործելով նրանց գիտելիքներն ու փորձը:

Նույնը կարելի է ասել Ուրարտուի համար: Ուրարտական բանակի հեծելազորի, ինչպես և մարտակառքերի համար տեղիական ողջ սահմաններից հավաքված ձիերը ուղարկվել են մանայաբնակ Մուրի՝ վարժեցնելու. մարզի տարածքում գտնվել են ձիաբուծարաններ՝ «երանակների տներ», ինչպիսին էր Անիաշտանիա «Փաղաքը»:

Մանայի քաղաքությունում զարգացած ձիաբուծության մասին են վկայում այլ արբյուրներ, ընդ որում, դրանցից հայտնի են տարբեր գույնի և ցեղատեսակների

պատկանող ձիեր: Արբյուրներում հիշատակվում են արծաթագույն (BABBAR(pešūti).MEŠ), աշխետ (DIR(sāmūti).MEŠ), հարշակեան (Har-šá-a-a), կարմիր (SA₅.MEŠ), սև (GI₆.MEŠ), իրգինի⁷ (ir-gi-ni) և տուսնու⁸ (tu-a-nu) կոչվող մծույզներ, մատակ ձիեր (MÍ.HÚB.MEŠ), ինչպես նաև ջորիներ (ANŠE.GÍR.NUN.NA.MEŠ): Թե կոնկրետ ինչ են նշանակել *իրգինին* և *տուսնուն*՝ հայտնի չէ, ենթադրաբար դրանք կարող են արտահայտել կամ գուներանոց, կամ ցեղատեսակ:

Մեծ հռչակ ունեին մնասյական (mēsāya) կոչվող ձիերը՝ երբեմնի անկախ, հետագայում Մանային կցված Մասի երկրի անունով: Չափերով փոքր այս կենդանիները, ըստ Նինվեի «Ձիերի ցուցակի», օգտագործվել են ասորեստանյան բանակի հեծելազորում, ի տարբերություն եթովպական (kusāya) «մեծ ձիերի», որոնք յժվում էին մարտակառքերին:

Ասորեստանին որպես հարկ Մանայի մատուցած ձիերի բանակի մասին ուղղակի վկայություններ չկան: Հիմք ընդունելով մարաբնակ երկրների համար սահմանված քվաքանակները, որոնք հայտնի են Թիգրաթալասար III-ի՝ Իրանում գտնված կոթող-արձանագրությունից, առեմախար ենթադրում է, որ Մանայից ստացվող ձիեր քանակը հասել է 300-ի: Հարկ է նշել, որ Աշշուրբանասայալ մանացիների չվճարած տարեկան հարկաչափին ավելացրել է ոչ ավելի քան 30 ձի:

Երկրորդ բաժինը («Արհեստներ») վերաբերում է արհեստագործության այն ճյուղերին, որոնք վկայված են կամ սեպագիր արբյուրներով, կամ հնագիտորեն: Առկա է խնդրին վերաբերող հարուստ նյութ՝ ներկայացված նյութական մշակույթի հազարավոր նմուշներով, ինչը թույլ է տվել առարկայացնել գրավոր արբյուրների սուղ տվյալները:

Նորասորեստանյան սեպագիր տեքստերում «մերձուրմյան մետաղի» հիշատակությունները պատկանում են Ասորեստանի տիրակալներ Աշշուրնաժիրայա II-ին և Սալմանասար III-ին: Նրանց արձանագրություններից հայտնի է Չամնա միության առաջնորդներից ստացված ռազմատուգանքի մասին, որը ներառել է ոսկի, արծաթ, անագ, բրոնզ և բրոնզե իրեր: Այդպիսիք սահմանվել են նաև որպես հարկ: Չամնական մետաղի ընդգծված հիշատակումները նրանց արձանագրություններում թույլ են տվել որոշակի դատարարություններ անել Չագրոսներում հաստատվելու ուղղված ասորեստանյան գործողությունների դրդապատճառների մասին:

Շատ ավելի խոստում են տարածաշրջանի հուշարձաններից հայտնաբերված նյութական մշակույթի մեծաքանակ նմուշները: Ըստ այդմ, բաժնում առանձին քննարկվում են մետաղագործության տարբեր ճյուղեր՝ բրոնզաձուլություն, ոսկերչություն ևն:

Արհեստագործության մյուս բնագավառը վերաբերում է խեցեղործությանը: Մերձուրմյան ավազանի խեցեղեղնը մշտապես գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Խնդրին նվիրվել են հարյուրավոր աշխատանքներ, որոնք ընդգրկում են ժամանակագրական լայն շրջան՝ նեոլիթ և այնուհետ: Առկա ուսումնասիրությունների մի մասը անդրադառնում է նաև մանայական դարաշրջանի խեցեղեղին: Կտտարված աշխատանքները թույլ են տվել բացահայտելու նրա մի շերտ (այսպես կոչված Cream-slipped buff ware), որը համարվում է բուն մանայական: Այս խեցեղեղնը հանդիպում է հյուսիս-արևմտյան Իրանի առնվազն 21 հնավայրում, ներառյալ Զիվիեն, Հասանյու III-ն, Ջենջան-և Մոլեյմանին, Բուկանը: Խեցեղեղի ընդհանուր քվաքումն է 800-600թթ. մ.թ.ա.:

Մնացյալ ենթաբաժինները վերաբերում են քարի, ոսկրի մշակման, ջուլիակային արհեստներին, փայտագործությանը: Նյութական մշակույթի տասնյակ նմուշներում առկա պատկերների շնորհիվ փորձ է արվում ամբողջացնել մերձուրմյան բնակիչների հագուկապին վերաբերող պատկերացումները:

Երրորդ բաժին («Առևտուր»): Իրանական բարձրավանդակի և միջագետքյան երկրների միջև իրականացվող առևտուրը թվագրվում է առնվազն մ.թ.ա. 3-րդ հազարամյակով: Հայտնի է, որ առևտրական կապեր են հաստատվել յուրօրեյների և խաբրիալտա Նուզիի միջև: Նորաստրեստանյան տեքստերից ելնելով կարելի է նշել, որ մերձուրմյան երկրներից արտահանվող ապրանքատեսակների թվում գլխավոր տեղը զբաղեցրել են խաշոր և մանր եղջերավոր անասունները, ինչպես նաև ձիերը: Ասորեստանյան տեքստերից հայտնի են ձիավաճառներ (DAM.GAR ANŠE.KUR.RA), որոնք զբաղվել են մանայական ձիերի առևտրով:

Մերձուրմյան ավազանը, թերևս, իր տեղն ուներ նաև մետաղների առևտրում՝ հանդիսանալով հումքի ուղղակի կամ միջնորդ մատակարար: Միջագետքյան երկրները մետաղի և մանավանդ անագի (AN.NA = annakum) որոշ մասը ստանում էին Իրանական բարձրավանդակից կամ նրա միջոցով: Մերձուրմյան Նաիրիի հետ կառավարվող մետաղի (անագի) առևտրի դրվագներ են հայտնի նորաստրեստանյան տեքստերից:

Առևտրի և տարանցիկ ճանապարհների խաշոր կենտրոն էր Հասանդուն: Հնավայրից գտնված նյութական մշակույթի հազարավոր նմուշների շարքում առկա են զգալի քանակությամբ ներմուծված իրեր: Դրանք թույլ են տալիս նշել, որ Հասանդուն կապեր է ունեցել Ասորեստանի, Ուրարտուի, սիրիա-փյունիկյան աշխարհի, կենտրոնական և արևմտյան Իրանի երկրների, ինչպես նաև հարավկովկասյան շրջանների հետ: Ընդհանուր պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ այստեղից հայտնաբերված ծովախեցիկները ծագում են Միջերկրական, Կարմիր ծովերից, Պարսից ծոցից և անգամ Հնդկական օվկիանոսից:

Հարկ է նշել, որ ուրարտական պետության վարած քաղաքականությունը, ուրարտա-ասորեստանյան հակամարտությունը տարածաշրջանում բազմաթիվ հետազոտողների կողմից մեկնաբանվում է տնտեսական շարժառիթներով՝ զագրոսյան առևտրական ուղիներին տիրելու շրջանակում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Վերջաբանում տրվում են ատենախոսության հիմնական եզրակացությունները, ըստ որոնց.

1. Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում՝ մերձուրմյան տարածքներում մ.թ.ա. I հազարամյակի սկզբներին ձևավորվում է ցեղայնությունների Չամուս միությունը, որի կազմի տարբեր քաղաքական միավորներ զարգանում են պետական իշխանության ձևավորման ուղիով: Գործընթացը փաստագրվում է մ.թ.ա. X դարից սկսած:
2. Պետականության կերտման, պետական իշխանության ձևավորման գործընթացը և դրան հետևած պատկերը տարածաշրջանի բնականոն զարգացման արդյունք էր: Նրանում արտաքին (օտար) գործոնների դերը հասնում էր նվազագույնի:
3. Մ.թ.ա. IX դարի կեսերին Ուրմիա լճի ավազանի Ջաղաթու գետի արևմտյան ակունքների շրջանում ձևավորվում է Իզիրուտ քաղաք-պետությունը, այլ կերպ՝ Մանաշը: Վերջին տերմինն ունեցել է նեղ կիրառում՝ արտահայտելով բացառապես քաղաքական մեկ միավոր: Քաղաքանվան այս տարբերակից են ծագում ասորեստանյան աղբյուրների «Մանացիների երկիր», ուրարտական տեքստերի «Մանա (երկիր)», «Մանայական (երկիր)» անվանումները:
4. Մանայական նորաստեղծ պետությունը ցուցաբերել է մեծ կենսունակություն՝ համեմատաբար կարճ ժամանակ անց մերձուրմյան ավազանում զբաղեցնելով առաջնային դիրքեր:

5. Մանայի թագավորությունը ռազմական նշանակալի կարողություններ ունեցող երկիր էր, ի վիճակի էր հավասար պայքար մղել ժամանակաշրջանի հզորների՝ իր հարևանների դեմ: Նրա հզորությանն է դիմել Ասորեստանը Ուրարտուի դեմ մղած պայքարում:
6. Մանան ունեցել է քաղաքական նշանակալի դեր ու կշիռ, միջպետական կապեր և ազդեցություն: Նրա հետ հաշվի են մտել Ասորեստանն ու Ուրարտուն, տասնյակ պետական կազմավորումներ, նրան են ապավինել մարական իշխանությունները:
7. Մանայի թագավորությունը մ.թ.ա. VII դարի առաջին կեսին դարձել է հյուսիս-արևմտյան Իրանի ամենահզոր և ընդարձակ պետությունը՝ առժամանակ գտնվելով նույն դիրքերում, ինչ ժամանակաշրջանի հզոր ուժերը՝ Ասորեստանը, Ուրարտուն, Բաբելոնիան, Էլամը:
8. Հիմքում լինելով կենտրոնացված պետություն (բուն Մանա), թագավորությունն ունեցել է դաշնային կառուցվածք՝ ներկայացնելով տարբեր երկրների ոչ միաձույլ ամբողջություն: Երկրի աստիճանական վերելքին զուգընթաց համակարգի արմատապես փոխվել է: Մանա կոչվող ընդհանրությունը դաշնությունից վերածվել է կենտրոնացված պետության՝ պետական ձևավորված կառույցներով:
9. Մանան ուներ նաև զարգացած տնտեսություն, հարուստ մշակույթ, առևտրական լայն կապեր:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Մանայի թագավորության գալառներն ու նրանց տեղադրությունը. – Երիտասարդ արևելագետների հանրապետական 21-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, Երևան, 2000, էջ 8-9:
2. Մանայի թագավորության վարչաքաղաքական միավորների և դրանց տեղադրության շուրջ. – Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր XIX, Երևան, 2000, էջ 153-172:
3. Ոռոգման համակարգը Ուրարտում և հարակից տարածքներում ըստ «Լուվրի աղյուսակի» – Երիտասարդ արևելագետների հանրապետական 22-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, Երևան, 2001, էջ 12-13:
4. Ուրարտու և Մանա. Մերձուրմյան ավազանում ուրարտական տիրապետության հաստատման խնդրի շուրջ – «Արևելք» (հոդվածների ժողովածու), Երևան, 2001, էջ 5-19:

ГРЕКЯН ЕРВАНД АМБАРЦУМОВИЧ

ИСТОРИЯ МАННЕЙСКОГО ЦАРСТВА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всеобщая история”

Защита состоится 25-го июня 2002 г. по адресу: 375019, г. Ереван, просп. Маршала Баграмяна, 24г, в Институте востоковедения НАН РА на заседании специализированного совета 006.

РЕЗЮМЕ

Представляемая работа посвящена изучению истории одного из значительных государственных образований Древнего Востока — Маннейского царства, известного из клинописных источников IX—VI вв. до н. э. и локализуемого в бассейне оз. Урмия и на сопредельных территориях, на юго-востоке Армянского Нагорья, в современном северо-западном Иране.

В течение более ста лет были проведены значительные работы по исследованию истории и исторической географии региона, включая территории, занимаемые когда-то Маннейским царством. Однако, несмотря на это, до сих пор нет всеобъемлющего анализа изучаемого вопроса.

Основными источниками при изложении диссертации послужили ассирийские, вавилонские и урартские клинообразные надписи, еврейские (Библия) и арамейские тексты, а также работы античных авторов.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, примечаний, списка использованной литературы и приложения, включая двенадцать схематических карт и более сорока таблиц.

Во введении обосновывается актуальность и значение темы, приводится обзор источников и использованной литературы.

В первой главе ("Военно-политическая история Маннейского царства /вторая половина IX в. — VI в. до н. э./") рассматривается круг вопросов, освещающих процесс образования Маннейского царства, подробно исследованы взаимоотношения этого государства с Ассирией, Урарту, северо-западными "царствами" и мидийскими княжествами. Результаты этих исследований можно суммировать в следующих выводах:

1. В начале I тысячелетия до н. э. на территории Армянского Нагорья — современного северо-западного Ирана формируется племенной союз Замуа.
2. После распада союза середине IX в. до н. э. в районе западных истоков реки Джагату бассейна озера Урмия образовывается город-государство Изирту (resp. Манаш).
3. Новое созданное Маннейское государство проявило высокую жизнеспособность, за сравнительно короткий срок заняв лидирующие позиции в приурмийском районе.
4. Маннейское царство было страной со значительным военным потенциалом. Оно было в состоянии вести длительную борьбу с соседними могущественными государствами того времени.
5. Манна имела значительную политическую роль и вес в межгосударственных отношениях. С ней считались Ассирия и Урарту, десятки государственных образований, заключали союз мидийские княжества.
6. Маннейское царство в первой половине VII в. до н. э. стало могущественным и крупным государством на территории северо-западного Ирана, занимая те же позиции, что и Ассирия, Урарту, Вавилония и Элам.
7. Будучи в своей основе централизованным государством, Маннейское царство представляло собой неоднородный союз различных стран.

Во второй главе ("Административно-политическая структура, топонимы и их локализация") рассматриваются государственная структура Маннейского царства, локализации целого ряда политических и географических единиц ("стран", городов и т. д.), входивших в состав этого царства.

Результаты исследования выявили существование в Маннейском государстве минимум пятнадцать административных единиц (шесть "стран" и девять областей).

В работе изучены также основные термины, относящиеся к государственному управлению Маннейского царства.

Третья глава ("Хозяйство Маннейского царства") посвящена вопросам экономики — земледелия, ремесла, торговли.

Археологические данные свидетельствуют, что Манна была развитой земледельческой страной. Кроме того, в ней было развито скотоводство, о чем свидетельствуют также клинописные источники.

Маннейское царство имело торговые связи с Ассирией, Урарту, сиропфиникийскими странами, территориями восточного и центрального Ирана, а также с южнокавказскими областями.

В заключение диссертации подводятся основные итоги работы. Работа может представлять интерес для исследователей, занимающихся вопросами истории Древнего Востока, древней истории Армянского Нагорья и Иранского плато.

GREKYAN YERVAND

THE HISTORY OF THE KINGDOM OF MANNA

SUMMARY

The dissertation is dedicated to the history of one of the most outstanding political units of the Ancient Near East — the Mannaeen kingdom, mentioned in the cuneiform inscriptions of the XI — VI c. B.C. and located in the basin of the Lake Urmia and on the neighboring territory, in the south-east of the Armenian Highland, on the present north-western Iran.

A great number of special studies are devoted during more than a hundred years to the history and historical geography of the region, including the territory occupied formerly by the kingdom of the Mannaeans. However, in spite of it, a complete study is missing.

The main sources of the dissertation are Assyrian, Babylonian and Urartian cuneiform inscriptions, Hebrew (Bible) and Aramaic texts, as well as the works of the Classical historiographers.

The dissertation consists of introduction, three chapters, conclusion, commentaries, the list of the used literature and supplement, including twenty schematic maps and more than forty tables.

The **Introduction** substantiates the actuality and the meaning of the theme and adduces the review of sources and used literature.

In the **First chapter** ("Military-political history of the kingdom of Manna /second half of the IX — XI c. B.C./") studies the range of matters, casting light upon the formational process of the Mannaeen kingdom, the interrelations with Assyria and Urartu, the "kingdoms" of the northern Zagros mountains and Median principalities. The results of this could be sum up in the following conclusions:

1. In the beginning of the I millennium B.C. on the territory of Armenian Highland — the present northwest Iran, the tribal union of Zamua was formed.

2. In the middle of the IX c. B.C. in the region of western reaches of the river Jagatu, the basin of the lake Urmia city-state Izirtu (resp. Manaš) was formed.
3. The newly created Mannaeon kingdom displayed a great vitality, for a quite short time taking leading position in the Urmia region.
4. The kingdom of Manna has been a country with a considerable military potential. It could lead a long-lasting struggle against the neighbors, powerful countries of that time.
5. Manna had an important political role and weight in the international relationship. Assyria and Urartu, many small countries were considered with him, including the Median principalities.
6. In the first half of the VII c. B.C. the kingdom of Manna became a powerful and large country on the territory of the northwestern Iran, keeping nearly equal to Assyria, Urartu, Babylonia and Elam.
7. The kingdom of Manna formerly being a pure union of different countries, further turned to a centralized state.

In the **Second chapter** ("Administrative-political structure, toponyms and their localizations") is considered the state structure of the kingdom of Manna and the localizations of a number of political and geographical units ("lands", towns and etc) of this state. The results of the study reveals the existence of minimum fifteen administrative-political units (six "lands" and nine districts). In the work there are also studied principal terms, concerning the state governing system of the Mannaeon kingdom.

The **Third chapter** ("The economy of the kingdom of Manna") deals with the matters of the economy – agriculture, trade and crafts.

The archaeological data witnessed that Manna was a well-developed agricultural country. Besides, there was developed the cattle breeding, which is witnessed in the cuneiform sources.

The kingdom of Manna had commercial ties with Assyria, Urartu, Syrian and Phoenician countries, the territories of western and central Iran as well as with the regions of south Caucasus.

In the **Conclusion** are given the principal results of the study.

The work may arouse an interest for the researchers dealing with the history of the Ancient Near and Middle East, and of the Armenian Highland and Iranian Plateau as well.